

1993 – 2023. Բալկաններում տեղական ժողովրդավարության 30 տարի

2023 թվականը, անշուշտ, սկսվում է անորոշության մթնոլորտում՝ պայմանավորված Եվրոպայում և աշխարհում տնտեսական և աշխարհաքաղաքական իրավիճակով: Սակայն, 2023-ը նաև կարևոր տարեդարձ է նշում ALDA-ի, ՏԺԳ-ների և ողջ ցանցի համար: **Ուղիղ 30 տարի առաջ էր, երբ ամեն ինչ սկսվեց՝ Բալկաններում առաջին ՏԺԳ-ների ստեղծմամբ:**

Թեև ALDA-ն ծնվել է 90-ականների վերջին, մեր աշխատանքն ու հանձնառությունը սկսվել են դեռևս 1993-ին, երբ Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ ստեղծվեցին առաջին ՏԺԳ-ները՝ քաղաքացիական հասարակությանն ու խաղաղ գոյակցությանը աջակցելու առաքելությամբ նախկին Հարավսլավիայի պետությունների հակամարտությունից հետո:

Առաջին ՏԺԳ-ն հիմնադրվել է 1993թ.-ին Սերբիայի Սուբոտիցայում, **տեղական ժողովրդավարության դեսպանություն* (ՏԺԴ) Սուբոտիցա** կոչումով, որից կարճ ժամանակ անց նույն թվականին Խորվաթիայում հետևեց **ՏԺԴ Օսյեկի** բացումը:

30 տարի անց իրավիճակը խորապես փոխվել է: Տարեցտարի Տեղական ժողովրդավարության Գործակալությունները ցույց տվեցին, որ հաջող գործիք են և այժմ հանդիսանում են 16 ՏԺԳ-ների ցանց, որոնք տարածված են Եվրոպական հարևանությամբ՝ Խորվաթիայում 3 գործառնական գործընկերներով (ԳԳ):

Այսպիսով, իրենց առաքելության հետ մեկտեղ առաջընթաց է ապրել նաև ՏԺԳ-ների աշխարհագրական շրջանակը: Այսօր ՏԺԳ-ները կարելի է գտնել Բալկաններից բացի այլ երկրներում, որտեղ մենք մեր ամենօրյա գործունեության մեջ պահպանել ենք հիշողությունը և մեր անցած երկար ճանապարհի էությունը:

Այսպիսով, **2023 թվականը կնշանավորվի մի շարք միջոցառումներով, որոնք ուղղված կլինեն նշելու ՏԺԳ-ների և նրանց պատվիրակների ամենօրյա գործունեությունը, ALDA-ի և ՏԺԳ-ների տարիների ձեռքբերումները:**

Հասարակական միջոցառումներ կկազմակերպվեն ողջ Բալկաններում, որտեղից ամեն ինչ սկսվեց՝ այդպիսով ճանապարհ դնելով՝ հիշեցնելով Բալկաններում և նրա սահմաններից դուրս մեր գործունեության զարգացման ուղենիշները:

Հրատարակություն կիրապարակվի, որը անեկդոտների, նկարների և վկայությունների ժողովածուի տեսքով կվերհիշի մեր առաջին 30 տարիների պատմությունը:

Տեսանյութ-վավերագրական ֆիլմ կատեղծվի՝ վերակենդանացնելու ամենակարևոր պահերը մեր պատմությունը նշանավորած վայրերի և մարդկանց պատկերների միջոցով:

Այնուհետև տարեդարձը կավարտվի **ALDA-ի Գլխավոր Վեհաժողովի** ընթացքում, որը հավանաբար տեղի կունենա 2023 թվականի հունիսին (հաջորդող ամիսներին կտրամադրվի տեղեկատվություն) գործընկերների, անդամների և պատվիրակների հետ միասին նշելու և անդրադառնալու ՏԺԳ-ների ցանցի ապագա զարգացմանը:

Ապա մենք կմոտենանք տարեվերջին՝ 2023 թվականի հոկտեմբերին **Ստրասբուրգում կայանալիք կարևոր իրադարձությամբ**, որտեղ ALDA-ն և ՏԺԳ-ները, հուսով ենք, ներկա կլինեն Կոնգրեսի շենքում:

Սրանք ընդամենը իրադարձություններով լի 2023-ի ուղենիշն են, որին հաջորդող շաբաթների և ամիսների ընթացքում պետք է բացահայտվեն բազմաթիվ այլ նախաձեռնություններ, որոնք նպատակ ունեն նշելու Բալկաններում տեղական ժողովրդավարության մեր առաջին 30-ամյակը, որտեղից ամեն ինչ սկսվեց մինչև մեր օրերը... և ով գիտի, թե դեռ քանի՞ էվոլյուցիա է սպասվում:

Թող մեկնարկի հորեյանական տարին:

** Միայն 1998 թվականին ՏԺԳ-ները սկսեցին կոչվել այնպես, ինչպես մենք գիտենք այսօր՝ տեղական ժողովրդավարության դեսպանատներից անցնելով տեղական ժողովրդավարության գործակալությունների:*

Հղում ՏԺԳ-ների բոլոր տարիների գործունեության հաշվետվությանը